Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԵՂԱՆԱՏԱՆԸ

(6 հունվարի 2000 թ.)

Ես ցանկանում եմ շնորհավորել ամենքիս՝ Քրիստոսի հրաշափառ Սուրբ Ծննդյան առիթով, որ ուրախությամբ ու բերկրանքով է լցրել յուրաքանչյուրիս հոգին այս պահին: Բայց, կարծում եմ, առանձնակի ուրախություն եմ ապրում՝ տեսնելով հավատքի վերազարթոնքը մեր ժողովրդի, տեսնելով այն հավատքի ամրությունը, որ մեր ժողովրդի գավակաց առաջնորդում է դեպի Մայր Աթոռ Միածնաէջ Սուրբ Տաճար: Ահա Նոր տարուց սկսյալ եթե եկեղեցու դռները մենք ամբողջ գիշեր բաց պահենք, վստահ եմ, որ հոսքը պիտի չդադարի: Մեր ժողովուրդը պետք ունի աղոթքի, պետք ունի հոգևորով իր կյանքն իմաստավորելու: Սուրբ Ծննդյան այս երեկո իմ աղոթքն ու մաղթանքն է, որ Տերը մեզ զորացնի մեր ծառայության, մեր առաքելության մեջ՝ կարողանալու կատարել մեր պարտքը Հայրենիքի, Եկեղեցու և ժողովրդի առջև փառք ու պատվով, որ մեր Եկեղեցիով և քրիստոնեական հավատքով, բազում փորձություններ ու արհավիրքներ վերապրած այս ժողովուրդը կարողանա շարունակել ապրել հույսով լի, հավատով լի՝ կերտելով իր վաղվա օրը դեպի հավիտենություն ձգվող:

Թող Աստված օրհնի այս Նոր տարին Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրհնությամբ, ջերմացնի մեզ ամենքիս և պարգևի առողջություն, ուժ, եռանդ՝ մեր աշխատանքով ու գործով մեր փառքը շարունակ երգելու նորածին մանկան, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի:

Աստուծո օրհնությունը ամենքիս: Բարի, ուրախ Նոր տարի և Սուրբ Ծնունդ: